



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hawgt abovyan.kotayq@mta.gov.am

1-ը մայիսի 2023թ

Արովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի շնորհավորական ուղերձը
Աշխատանքի և աշխատավորների օրվա առիթով

Մայիսի 1-ը աշխատանքի և աշխատավորների միջազգային օրն է: Աշխատավոր մարդու ստեղծագործ միտքն ու արարող ձեռքը արժեք են և հիմնաքար հասարակության զարգացման, պետության բարգավաճման հարցում: Ինչպես հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս հայը մշտապես աչքի է ընկնում մեծ աշխատասիրությամբ, ստեղծարար էությամբ ու բացառիկ ձգտումով, հենց այս հատկանիշների շնորհիվ ենք հազարամյակներ շարունակ ապրում, արարում, վստահ ու նորանոր աշխատանքային ծրագրերով շարժվում առաջ:

Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա առիթով սրտանց շնորհավորում են աշխատասեր հայությանը, առանձնահատուկ և ջերմորեն շնորհավորում են Արովյան համայնքի աշխատավոր բնակչությանը, Արովյանի համայնքապետարանի, համայնքի բնակավայրերի և համայնքային ենթակառուցվածքային կազմակերպությունների աշխատակիցներին:

Սիրելի՛ գործընկերներ.

Բոլորիս պարտաճանաչ ու սրտացավ աշխատանքը միտված է մեկ նպատակի՝ զարգացնել մեր համայնքը և ապահովել հարմարավետ կյանք բնակիչների համար: Հանուն մեր ընտանիքների բարեկեցության, հանուն մեր համայնքի շենացման՝ էլ ավելի մեծ եռանդով ու նվիրումով պիտի շարունակենք գործել:

Հարգելի՛ աշխատավորներ.

Այս կարևոր օրվա առիթով կրկին շնորհավորելով՝ մաղթում են ձեզ քաջառողջություն, անսպառ էներգիա, արդյունավետ ու գնահատված աշխատանք բոլոր ոլորտներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ